# Հ Ր Ա Մ Ա Ն N 207-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

**«27» ԱՊՐԻԼԻ 2022 Թ.** **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ՆՈՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՆՈՏԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1394-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել նոտարի թեկնածուների նոտարական գործունեության իրականացման հմտությունների ուսուցման դասընթացի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել նոտարի թեկնածուների նոտարական գործունեության իրականացման հմտությունների ուսուցման դասընթացի ժամանակացույցը և դասընթացներին մասնակցող նոտարների թեկնածուների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սահմանել, որ նոտարի թեկնածուների նոտարական գործունեության իրականացման հմտությունների ուսուցման դասընթացի մեկ մասնակցի մեկ ակադեմիական ժամի արժեքը, համաձայն «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ներկայացված նախահաշվի, կազմում է 3000 (երեք հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

4. Սահմանել, որ նոտարի թեկնածուների նոտարական գործունեության իրականացման հմտությունների ուսուցման դասընթացի արժեքը մասնակիցները

վճարում են «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում գործող 900018004821 հաշվեհամարին:

Invalid signature

X

Karen Andreasyan

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի
2022 թվականի ապրիլի 27-ի
N 207-Ա հրամանի

# ԾՐԱԳԻՐ
## Նոտարի թեկնածուների գործունեության իրականացման հմտությունների ուսուցման դասընթացի

| Թեմա | | Ունկնդրի աշխատանքի ծավալը /ակադեմիական ժամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | ընդամենը | այդ թվում | |
| | | | դասախոսություն | գործնական պարապմունք |
| 1. | Հաղորդակցման հմտություններ | 6 | 6 | |
| 2. | Նոտարական էթիկա | 4 | 4 | |
| 3. | Քրեական օրենսդրություն | 4 | 4 | |
| 3.1 | Նոտարը որպես հանցագործության սուբյեկտ | 2 | 2 | |
| 3.2 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք | 2 | 2 | |
| 4. | Քաղաքացիական օրենսդրություն | 20 | 20 | |
| 4.1 | Քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկան, մեթոդը և սկզբունքները | 2 | 2 | |
| 4.2 | Քաղաքացիական օրենսդրությունը և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերը | 2 | 2 | |
| 4.3 | Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագումը | 2 | 2 | |
| 4.4 | Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները և նրանց իրավունակության և գործունակության հասկացությունն ու ծագումը | 2 | 2 | |
| 4.5 | Քաղաքացիական գործարքների և | 2 | 2 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պայմանագրերի հասկացությունն ու տեսակները | | | |
| 4.6 | Նոտարական վավերացում պահանջող քաղաքացիարիավական գործարքների և պայմանագրերի հասկացությունն ու տեսակները | 4 | 4 | |
| 4.7 | Ժառանգական իրավունքի հասկացությունը, իրացման եղանակներն ու միջոցները | 6 | 6 | |
| 5. | Վարչական օրենսդրություն | 4 | 4 | |
| 5.1 | Նոտարական գործողությունների վիճարկման վերաբերյալ գործերի վարույթները | 4 | 4 | |
| 6 . | Նոտարիատի վերաբերյալ օրենսդրություն | 12 | 12 | |
| 6.1 | Նոտարական գործունեության և նոտարի իրավական դրության առանձնահատկությունները | 2 | 2 | |
| 6.2 | Նոտարական գործունեությանը ներկայացվող պահանջները | 2 | 2 | |
| 6.3 | Գործարքների վավերացումը, ժառանգության իրավունքի վկայագիր տալը, ժառանգության պահպանումն ու կառավարումը | 2 | 2 | |
| 6.4 | Նոտարական այլ գործողություններ | 2 | 2 | |
| 6.5 | Նոտարի գործունեությունը կանոնակարգող ենթաօրենսդրական ակտերը | 2 | 2 | |
| 6.6 | Նոտարական պալատի նպատակն ու խնդիրները | 2 | 2 | |
| 7. | «ՀՀ էլեկտրոնային նոտար» համակարգը և համակարգչային հմտություններ | 10 | 10 | |
| 7.1 | «ՀՀ էլեկտրոնային նոտար» համակարգը | 6 | 6 | |
| 7.2 | էլեկտրոնային փաստաթղթերի կազմման տեխնիկա | 4 | 4 | |
| 8. | Գործնական պարապմունք | 60 | | 60 |
| | Ընդամենը | 120 | 60 | 60 |

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի
2022 թվականի ապրիլի 27-ի
N 207-Ա հրամանի

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նոտարի թեկնածուների նոտարական գործունեության իրականացման հմտությունների ուսուցման դասընթացի

| N | սկիզբ | ավարտ |
|---|---|---|
| 1. | 16.05.2022թ. | 16.08.2022թ. |

Դասընթացների անցկացումն՝ ըստ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաստատած դասացուցակի՝ շաբաթական երկու օր գրաֆիկով:

## ՑԱՆԿ

Նոտարական գործունեության իրականացման հմտությունների ուսուցման դասընթացին մասնակցող նոտարի թեկնածուների

| N | Ազգանուն, անուն, հայրանուն |
|---|---|
| 1. | Դավթյան Սամվել Ռազմիկի |
| 2. | Սանթոյան Լուսինե Կարենի |
| 3. | Վարդանյան Նարե Գագիկի |

: